



Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ - Հայաստան

Պայքար հանուն ջրի

Լանջազատ համայնքը, որի բնակչությունը 2100 մարդ է, Արարատյան հարթավայրի գյուղերից է, որտեղ գտնվում են Հայաստանի ամենաբերրի հողերը: Եվ չնայած դրան, այն ունի լուրջ ռոռզման խնդիրներ: Գյուղի մի զգալի հատված՝ հյուսիսային թաղամասը, տարիներ շարունակ ստիպված էր իրենց այգիների ռոռզման նպատակով օգտագործել բավականին թանկարժեք խմելու ջուրը: Գյուղի մնացած մասը ռոռզման ջուրը ստանում էր պոմպակայանից: Լանջազատի բնակիչներին օգնելու նպատակով ՀՄՀ-Հայաստանը ձեռնամուխ եղավ հյուսիսային թաղամասի ներտնտեսային ռոռզման ցանցի կառուցմանը՝ 1.7 կիլոմետր ընդհանուր երկարությամբ:

Անահիտ Երզիրարյանը, ով Լանջազատի հնաբնակներից է, այն մարդկանցից է, ովքեր մեծապես շահեցին ռոռզման ցանցի կառուցումից: Նրա ընտանիքը մեծ այգի ունի՝ պտղատու ծառերով և ելակի մարգերով: Վերջինս աճեցվում է վաճառքի նպատակով: Սակայն խմելու ջուրը ոչ մի կերպ չէր նպաստում ելակի աճի խթանմանն ու հարուստ բերքի ստացմանը: Այն պարունակում է մեծ քանակությամբ քլոր և չունի այն բազմաթիվ կարևոր նյութերը, որոնք անհրաժեշտ են հատապտուղների, մրգերի և բանջարեղենի աճի խթանման համար:

«Ես անձամբ եմ խնամում մեր այգին, հատկապես ելակը»,-աում է Անահիտը,-«Մենք այն վաճառքի ենք հանում մայիսին, քանի որ սա վաղահաս տեսակ է: Այն կարող է աշնանը ևս բերք տալ, բայց ռոռզման ջրի բացակայության պայմաններում դա անհնար էր: Սակայն այս տարի, երբ ռոռզումը բարելավվեց, մենք ելակի որոշակի բերք ունեցանք նաև հոկտեմբերին»:



*Անահիտ Երզիրարյանը և նրա թոռնիկը՝
Դերենիկը ելակի այգում: Դերենիկը շատ սիրում է
ելակ ուտել:*

Անահիտ Երզիրարյանը հավատացած է, որ եկող գյուղատնտեսական սեզոնը շատ ավելի արդյունավետ կլինի ռոռզման ջրի մատչելիության շնորհիվ: Օգտվելով այս հնարավորությունից՝ Անահիտը և իր հարսը՝ Գայանեն, որոշել են ավելացնել ելակի տնկիները և հաջորդ սեզոնին ստանալ ավելի շատ բերք, որը նրանք վաճառում են Երևանում:

Ներկայումս ՀՄՀ-Հայաստանը արդեն իսկ ավարտել է ներտնտեսային ռոռզման ջրանցքների շինարարությունը չորս համայնքում՝ 6.5 կիլոմետր ընդհանուր երկարությամբ: Բոլոր համայնքները, որոնք ընդգրկված են ներտնտեսային ցանցերի կառուցման նախագծերում, համաձայնել են շինարարության ընդհանուր ծախսերի 15 տոկոսի համաֆինանսավորման պայմանին՝ նախապես քննարկելով դա համայնքային խորհուրդների և Ջրօգտագործողների ընկերությունների հետ: Այնուհետև ՀՄՀ-Հայաստանի գրասենյակ են ներկայացվում նրանց վերջնական դիմում-հայտերը հաստատման և կապալառուի ձեռքբերման նպատակով: